յութեան ընթացքում, երբեք չի մտածել օրէնք, հաստատուն կարգ ու կանոն ստեղծելու: Ամէն ոչ թողնուած է եղել իր ազատ կամքին՝ բարի կամ չար գործելու: Եւ որովհետեւ մարդկային բնաւորութիւնը միշտ տրամադիր է չարը գործելու — Աւետարանի ասածին պէս՝ չարի ճանապարհը լայն է եւ հեշտալի — դրա համար էլ մեր երկիրը լցուել է անօրէնութեամբ եւ թշուառացել:

Անգամ իր անկախութեան ժամանակ՝ Հայաստանը կառավարուել է առանց օրէնքի: Թագաւորների եւ իշխանների կամքն է եղել օրէնքը, աւելի ճիշդ՝ նրանց քմահաճոյքը:

Բայց մի՞թէ կարող է հանդուրժելի համարուել նման երեւոյթը: Չէ՞ որ թագաւորներն ու իշխանները գերմարդիկ չեն. նրանք էլ սովորական մահկանացուներ են, մարդկային միեւնոյն դրական եւ բացասական յատկութիւններով, միեւնոյն զգացմունքներով ու կրքերով: «Նրանք էլ սիրում են, ատում, բարկանում, քաղցում, յագենում, հիւանդանում և մեռնում են, ինչպէս իրենց հպատակները» (46):

Դրա վրայ աւելացրէք նաեւ, որ իշխանութիւնը եւ ուժի գիտակցութիւնը ընդհանրապէս ամբարտաւան են դարձնում մարդս. եւ յաճախ չարիքների աղբիւր հանդիսանում, ապա միանգամայն հասկանալի կը լինի Շահամիրեանի զարմանքը, երբ գոչում է. «Ի՞նչպէս կարող է մէկ մարդը թագաւորել մի ամբողջ ազգի եւ մի ազատ ժողովրդի վրայ, քանի որ նա չունի ոչինչ աւելի, քան մի մարդու կարողութիւնը» (19):

Այստեղից է ահա բխում մեր հեղինակի ժխտողական վերաբերմունքը դէպի միապետութիւնն ընդհանրապէս եւ դէպի անսահման միապետութիւնը մասնաւորապէս: Հայաստանի թշուառութիւնը եւ հայ ժողովրդի ներկայ ու անցեալ դժբախտութիւնները — նրա կարծիքով — հետեւանք են գլխաւորապէս երկրի սխալ վարչաձեւի՝ ինքնակալ միապետութեան եւ դրա բնական չարունակութիւնը կազմող օրէնքի բացակայութեան:

Սակայն դրա պատճառը նա միամտօրէն հայ ժողովրդի ծուլութիւնն է համարում, որ եւ դատապարտում է ամենախիստ ձեւով.— «Եթէ հայ ժողովուրդը ծոյլ չդտնուէր եւ ժամանակին մեր փոփոխական բնութեան ցաւի դեղը հաստատէր, մենք ազատ կը լինէինք այն դարշելի նախատինքից, որ չարունակ կրում ենք մեր ուսերի վրայ անօրէններից» (100):

Այսպէս ուրեմն, օրէնքի բացակայութիւնն է եղել հայ ժողովրդի թշուառութեան գլխաւոր պատճառը, հետեւաբար եւ օրէնքի գոյութիւնը պիտի լինի նրա փրկութեան ու երջանկութեան խարիսխը:

Ահա այն մայր գաղափարը, որ կազմում է հեղինակի բոլոր մտքերի, ինչպէս նաեւ «Որ. Փառաց»ի հիմնական առանցքը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԸ

Հայաստանի թշուառութիւնը եւ նրա պատճառները մանրամասնօրէն ներկայացնելուց յետոյ՝ Շահամիրեանը տալիս է եւ այն միջոցները, որոնցով հայ ժողովուրդը կարող է փրկուել եւ երջանկութեան հասնել:

Դրանք են.—

ա) Անկախութիւն

Բնական է, որ այդ միջոցների թւում առաջին տեղը պիտի բռնէր հայ ազգի ազատագրումը ամէն մի օտար լծից կամ իր լեզուով եթէ ասենք՝ «ի ծառայութենէ այլ ազգաց»:

Բայց ի՞նչպէս պիտի կատարուի այդ ազատագրումը — ապստամբութե՞ան միջոցով թէ՞ մի այլ ճանապարհով: Սա՛ է հետաքրքրականը:

Յաճախ նա խօսում է զէնքի եւ նրա գործածութեան կարեւորութեան մասին, գտնում է անհրաժեշտ, որ հայ մանուկները, այբուբէնի հետ միասին, նաեւ զինավարժութիւն սովորին. յորդորում է հայ հայրերին, որ իրենց զաւակներին կրթեն «զէնքի եւ զինուորութեան արհեստի» մէջ. յորդորում է հայ օրիորդներին՝ ամուսնանալ «քաջ տղամարդկանց եւ քաջ զինուորների հետ» (129) եւն.: Այս ամէնից մարդ այն տպաւորութիւնն է ստանում, որ հեղինակը վերջ ի վերջոյ զէնքը եւ ապստամբութիւնը պիտի առաջարկի որպէս միակ միջոց հայ ժողովրդի փրկութեան:

Սակայն, այդպէս չէ: Իր սովորական անհետեւողականութեամբ այս դէպքում էլ մտածողութեան մի խոշոր թռիչք է կատարում մի բեւեռից դէպի միւսը: Ապստամբութեամբ կամ զէնքի միջոցով ազատութիւն ձեռք բերելու